



## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԶՈՂԻԿՈՍԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱ**

### ՄԵԿՆՈՒՄ

2000 թվականի փետրվարի 29-ի առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ռուս Ուղղափառ Եկեղեցու զահակալ, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Երկրորդի եղբայրական հրավերով մեկնեց Մոսկվա:

Նորին Սրբությանը ուղեկցում էին Հայ Առաքելական Եկեղեցու Արքախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպոս. Մարտիրոսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջնեկեղեցական հարաբերությունների բաժնի գլխավոր քարֆուլար Տ. Եղիշիկ եպս. Պատրոսյանը, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նարան եպս. Հովհաննիսյանը, Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը, Սանկտ-Պետրուրության հայոց հոգևոր հովիճ Տ. Եղիաս արք. Ներսիսյանը, Տ. Արշակ արք. Խաչարյանը՝ իրու զավագանակիր, և Գերագոյն Հոգևոր Խորիրդի անդամ Ռաֆայել Պապայանը:

Հայ հոգևորականների պարգևիրակության այցը Ռուս Ուղղափառ Եկեղեցու աթոռանիսար, Նորին Սրբության գնահարմամբ, քոյլ Եկեղեցիների հոգևոր պետքի եղբայրական սիրո և հարգանքի արդարայդությունն է:

### ԺԱՄԱՆՈՒՄ ՄՈՍԿՎԱՅԻ «ՎՆՈՒԿՈՎՈ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՄ

Նոյն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և իրեն ուղեկցող հոգևորական և աշխարհական անձններ ժամանեցին Մոսկվայի «Վնուկովո» օդանավակայան:

Նորին Սրբությանը դիմավորեցին Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Երկրորդը, մետրոպոլիտ Դիմիրիինը, Մոսկվայի Պատրիարքարանում Ալեքսանդրիայի, Բուլղարիայի և Անդիտի Ասորի Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները, Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության արքակարգ և լիազոր դեսպան տիտար Սուրեն Սահակյանը, թեմական խորիրդի անդամներ, բարձրաստրիճան այլ պաշտոնյաներ, մեծաթիվ ազգայիններ:

Այսինքն՝ Անհավառ Հայրապետի շքախմբին միացավ նաև Ռուսաստանի հայոց թամբի առաջնորդ S. Տիրան արքան. Կյուրելյանը՝  
Ողջագործակից հետո՝ Անհավառ Հայրապետն առաջնորդվեց օդանավակայաց-




Դիմավորում «Ասուկով» օդանավակայացանում

Նի պարսկի սրան, որ փրկեց փոքրիկ հյուրապետություն: Ապա Նորին Սրբությանը բարիզավարյան խոսք ասաց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ակերսի Երկրորդը՝ հայդնելով իր ուրախությունը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելության առիթով:

## ԺԱՄԱՆՈՒՄ ԴԱՄԱԼՈՎՅԱՆ ՎԱՆՔ

Շքախումբը օդանավակայանից ուղևորվեց Դանիլովյան վանք, որ և իշխանեցին Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդը և նրան ուղեկցող հոգևորական և աշխարհական անձնինք:

Մի քանի ժամ անց Ռուս Ողջապատ Եկեղեցու առաջնորդ, Նորին Սրբություն Ակերսի Երկրորդը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հյուրընկալեց Պատրիարքարքանի ընդունելության սրահում: Զույր Եկեղեցիների Շովկապետի ողջույնի բարեմաղթանաց կարճ արարողությունից հետո հոգևոր առաջնորդներն անդրադան իրենց Եկեղեցիների ներկա կացությանը: Նրանք նշեցին, որ 70 տարիների անհավաքության մթնոլորդի պարբռառով երկու Եկեղեցիներն անցել են փորձությունների միևնույն ճանապարհ, և այսօր վերանորոգության անհրաժեշտությունը ծառացած է երկուսի առջև է: Երկու առաջնորդները, կարևորելով Հայաստանում և Ռուսաստանում ասպամատիկ պարբռադրանքով փակված կամ խոնարհված Եկեղեցիների վերականգնումը, այնուամենայնիվ, իրեն առաջին խնդիրը, անդրադան այն ծրագրերին, որոնք կոչված են վերականգնելու, վերակենդանացնելու



ԵՐԿՈՒ ՀՈՎՎԱՊԵՏՆԵՐԸ



ԵՐԿՈՇ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՌԴ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱԴԱԲԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Վ. ՊՈՒՏԵՎԻՆԻ հետ

Ասկծո ժողովրդի աղճաբված հոգիները և վերադարձնելու նրանց Քրիստոսի Եկեղեցի:  
Վեհակառ Հայրապետը ի մասնավորի ասաց.

### «Զերդ Սրբություն»

Առ Աստված զոհության աղոթք է այս պահին մեր շուրջերին երջանիկ մեր հանդիպման արիթով, եթե Մենք, որպես Շովկապետ Հայասպանյաց Եկեղեցու, եկեղեցն մեր եղայրությունը ամրապնդելու ի Քրիստոս մեր սիրեցյալ եղբար՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու քաջակորով Հայրապետ Ն. Ս. Ավեքսի Երկրորդի եեք: Ուրախ ենք Տիրախնամ Ռուսիոն մայր քաղաքում վերաբին գրինվելու համար և կիսելու խնդրությունը մեծագործ ուս ժողովրդի մեծ հավաքի վերարթության, որի սրանցելի վկայությունն է Մոսկվայի կենդրությունը նոր շուրջով երկինք խոյացած Սուրբ Ամենափրկիչ Տաճարը: Ավանդաշաբ Ռուս Ուղղափառ Եկեղեցին՝ միշտ հավագարիմ իր առաքելությանը, դարեր ի վեր Տուսիք, Հավաքի, Սիրո ակունքն է իր ժողովրդի կյանքում, բարու անձանձիր սերմացանը, ոգեշնչողը քրիստոնեական նրա մշակույթի:

**Զերդ Սրբություն, սիրեցյալ եղբար ի Քրիստոս.**

Հայության հավաքի օրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեր ժողովրդի ողջույնն ու սերն ենք բերել Զերդ և հավագալու համայն Զեր ժողովրդին:

Պարմության խորքերից են գալիս հայ և ոսս քրիստոնյա ժողովուրդների եղայրական հարաբերությունները՝ հիմնված բարի կամնցողության և սիրո վրա, քանզի սկզբնավորվում են Հարեժական նոյն դաս արմադիք:

Արդարն, Ասպծուն հաճելի եղավ, որ առաջին քրիստոնյա պետությունը՝ Հայասպանը, որ բազմադարյա իր կենսագրության մեջ հաճախ է փորձություններ գետսել, հայացը վարահությամբ հյուսիս դարձելի և գդին այնպես անկեղծ բարեկամի: Ինչպես էլ փոփոխվել են պարմական հանգամանքները, հանձին հայության, Ռուսասպանը միշտ ունեցել է անդավան դաշնակից, որը բիրյական իր հողում 2000 դարի կյանքն իմաստագորած Քրիստոսի խաչով, Արևելքի ու Արևմուգի դարպասներում պատրիարքն է եղել քրիստոնեության: Այսօր վերագրած իր անկախ սինդրականությունը, Հայասպանը շարունակում է լինել հիմնամուր ամրոց քրիստոնեության, որի բերդապարհապնդից է Արցախը՝ առաքելական ժամանակների սրբավայր-վկայարաններով:

Պարմությամբ է թեկադրված Ռուսասպանի առաքելությունը ժողովուրդների կյանքում, մասնավորաբար՝ Արևելքի: Նամամարդկային հնչողության իր մշակույթով, հոգևոր արժմություն կարծես բնադրու կարողությամբ Ռուսասպանը կոչված է արթուրյան առաջնորդներու ժողովուրդների բարի կամնցողության ու փոխմարդունան ոգին:

Հավաքում ենք, որ նոր՝ երրորդ հազարամյակը բացվելու է թեթենեսյան «յերկիր խաղաղութիւն», ի մարդիկ հաճույքին» ավելիքով և նշանավորվելու է աշխարհում խաղաղության, արդարության, հաշվության հասպազումով, ժողովուրդների՝ եղայրական անկեղծ սիրո վրա կառուցված հարաբերություններով: Հավաքում ենք, որ իրենց նոր կյանքը կառուցող մեր երկու ժողովուրդները ևս, հաղթահարելով դնդեսական, ընկերային, քաղաքական կյանքի ներկա դժվարությունները, առավել հնարավորություններ պիտի ունենան փոխահավելու համագործակցության, իսկ մեր երկու առաքելաշապիդ Եկեղեցիները՝ իրենց ջանքերի միավորման՝ հանուն Քրիստոսի մանապարհով հոգևոր լույսի դարածման և Բարու հաղթանակի:

**Մեր աղոթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրյալի օրինությամբ անձայրածիր**

Ուստարածի բոլոր կողմերում մշկամնա տիրի խաղաղությունը և նրա հյուրքնելայ հողում արքասավորվն բարի գործերո բոլոր: Թող Տերը բարօրություն և նրամներություն պարզեի Ուստարածի և համայն աշխարհի ժողովուրդներին, մեկնարկած ջանքերու կերպելու նոր օրը Երկիր մորորակի:

Զերդ Սրբություն. Մեկ միավորում ենք Մեր աղոթքը բոլոր այն աղոթքներին ու մատրասերներին, որ Զեր ծննդյան և անվանակրօտյան ասիթով այսօր բարձրաց վում են առ Ասրված: Հարսավնարակն ծառադրյան մեջ ուզում ենք Զեզ գլամել մշկապես առողջ, առույգ ու քաջակրորդ՝ երկար գարիներ հովկեր Քրիստոսա վանդ Ռուս Եկեղեցին և շարունակելու ներդրումը բոլոր մեր Եկեղեցիների համագործակցության մեջ:

Ի համ եղբայրական Մեր սիրո ընդուներ Ասրվածաշունչ մարյանի արձաքյա այս կազմը, սկարբաւարիած Հայաւրանի լավագոյն վարպետների ծնորով: Նաև նվիրում ենք Զեզ լուսանկարը այն խաչքարի, որ մոր ժամանակներս կրեսի Մու կվա՝ փեղադրելու Սուրբ Ամենափրկիք նորակերպ վաճարում՝ որպես Հայ Առաքե յական Եկեղեցու սրբարքի բնծա՝ մարտցված ռուս ուղղափառ եղբայրներին և որպես խորհրդանիշ, որ մենք կիսում ենք Ուստարածում հոգևոր կյանքի վերաբ նորդյան ուրախությունը:

Եղբայրական անկեղծ սիրով երավիրում ենք Զերդ Սրբությանը Զեզ հարմար ժամանակ այցելելու Մայր Սուրբ Էջմիածին՝ Իշման Սուրբ Սեղանի առջև միասնաբար աղոթելու համայն աշխարհում խաղաղության հասրավման, ժողովուրդների ու պետքությունների բարեկամության ու համագործակցության, մեր Եկեղեցիների անքաղիքերի եղբայրության համար:

Եվ թող Տերը գորացնի մեզ բոլորիս մեր պարքի մեջ և օրինի մեր ջանքերը հանուն Իր փառքի, հանուն Քրիստոսաներ Ռուս Ուղղափառ և Հայ Առաքեկան Եկեղեցիների պայծառության, մեր երկու պետքությունների գորացման և մեր ժողովուրդների բարիքի»:

Սոսկվայի և Համայն Ռուսիի Պատրիարք, Նորին Սրբություն Ավեսի Երկրորդն իր ուրախությունը հայրնեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ-ին Մոսկվայում հյուրընկալելու ասիթով: Նորին Սրբությունը սիրո և բարի կամնցողության զգացումներ հայրնեց Հայ Եկեղեցուն և նրա Գահակալին՝ ասելով.

«Ի սրբն ողջունում ենք ի Քրիստոս մեր սիրեցյալ եղբայրը՝ Զերդ Սրբությանը, և Ռուս Ուղղափառ Եկեղեցի կարարած այս այցելության ընթացքում Զեզ ուղեկցողներին:

Ոչ վաղ անցյալում էր, երբ մենք գոհաբանական աղոթքներն էինք վերառաքում առ Ասրված՝ Տիրոց Հայ Առաքելական Եկեղեցուն 132-րդ զահակալը պարզելու ասիթով: Եվ ահա այսօր, հյուրընկալելով Հայ Առաքելական Եկեղեցու Գահակալին, նորից հոգեպես ցնծության մեջ ենք: Մեծապես զգացված ենք, որ Դուք՝ Զերդ Սրբություն, Զեր պաշտոնական առաջին այցելությունը կատարեցիք հարկավես Ռուս Ուղղափառ Եկեղեցի: Հասկանում ենք, որ Զեր այս ընդունությունը պարահական է, քանզի Հայ Առաքելական Եկեղեցին և Ռուս Ուղղափառ Եկեղեցին, ինչպես նաև հայ և ռուս ժողովուրդները միմյանց են կապված դարավոր բարեկամական հարաբերություններով: Մեր ցանկությունն է, որ այստեղ, մուսկովյան հողի վրա,

Դուք՝ Զերդ Սրբություն, և Զեզ ուղեկցողները զգան եղբայրական մեր հարաբերությունների իրական ջերմությունն ու անկեղծությունը, որ ուս ժողովուրդը փածում է առ հայ ժողովուրդը:

Սիրով արդահայում ենք մեր խորին հարզանքը առ բազմադարյան հայ մշակույթը: Առաջին հերթին իշխում ենք հայ ժողովուրդի քրիստոնեական ուրույն պատմությունը, որը, անշուշտ, անբաժան է պետության պատմությունից: Տայասրանը առաջին պետությունն է, որ քրիստոնեությունը ընդունեց որպես պետական կրոն: Այս մնացույն իրողության 1700-ամյակը կվոնճախմբվի հաջորդ փարի: Քրիստոնեական կենցաղավարության հարյուրամակների ընթացքում Տայասրանը աշխարհին ի ցույց դրեց հոգևոր արծենների գանձարանը, քրիստոնեական սխրագործության գեղեցկությունը, մշակույթի և գիտության մնացույն նվաճումները: Տայոց գրերի սրբեղման շնորհիկ Տայ Եկեղեցին առաջիններից մենքը Սուրբ Գիրքը ունեցավ ազգային լեզվով, որն իր հերթին կենդանարար աղբյուր հանդիսացավ հայ մշակույթի և արվեստի ծաղկման գործում:

Տայ Եկեղեցու ու հայ ժողովուրդի պատմությունն ու մշակույթի մնացույնը չէ միայն, որ մեզ մղում է նման ջերմ արդահայությունների: Մնացած ուրախ ենք, որ Դուք, Զերդ Սրբություն, ոչ միայն սափարել եք մեր Եկեղեցիների ավանդական բարեկամական հարաբերությունների գարզացմանը, այլև ակնհայտ պատրաստակամություն եք ցուցաբերել համակողմանի ամրապնդման համար: Կրկնակի ուրախ ենք, բանզի Ռուս Ուղղափառ Եկեղեցին նոյնական ձգությում է եղբայրական, բարեկամական հարաբերությունների միջև: Զերդ Սրբություն. մեր Տեր Շնոտս Քրիստոսի ծննդյան հորելյանական դարում այս Զեր առաջին այցելությունն է Ռուս Ուղղափառ Եկեղեցի: Քրիստոսի ծննդյան 2000-ամյակը մեր միտքը ուղղում և աղոթարար հայացքը հառում է դեպի Ասքու մնացույն և փրկարար գործերը, դեպի ապագա՝ գալիք երրորդ հազարամյակ: Ասիթից օգդվելով թոյլ փվեք հոյս հայրներ, որ Ասքու օգնությամբ գալիք հազարամյակում մեր Եկեղեցիները կշարունակեն ջանք չխնայել՝ հասնելու ասպարագադարձվեր քրիստոնեական միության, որի ծառայությանը փասնամյակներ շարունակ նվիրվել են թե՛ Տայ Առաքելական, և թե՛ Ռուս Ուղղափառ Եկեղեցիները:

Թոյլ լրվեք կրկին ջերմորեն ողջունել Զեզ, Զերդ Սրբություն, Ռուս Ուղղափառ Եկեղեցի կապարած պաշտոնական այցելության ընթացքում Զեզ ուղեկցողներին և մաղթել բարի և օրինյալ օրեր երարքներ ուսական հողում:

**Երկար և բեղմնավոր կյանք Զերդ Սրբությանք:**

Տանդիպումից հետո երկու Ռուսական Եկեղեցիները պատրասխանեցին լրագրողների բազմաթիվ հարցերին:

Լրապալական գործակալություններից մենք այն հարցին, թե ինչպիսի խնդիրներ քննարկեցին հանդիպման ընթացքում, Ալեքսի Երկրորդ Պատրիարքը պատրասխանեց:

«Այսօր դիմավորելով Նորին Սրբությանը՝ մենք խորին բավականությամբ և անկեղծ ուրախությամբ ենք նշում, որ Գարեգին Բ Կաթողիկոսն իր ընդունությունից և օծումից հետո առաջին պաշտոնական այցը կապարեց Ռուս Ուղղափառ Եկեղեցի: Մենք քննարկեցինք հարցերի մի ամրող շարք, փոխանակեցինք կարծիքներ, թե

ինչպես և բնիակում մեր երկու Եկեղեցիների կյանքը. և համոզվեցինք, որ գործում ներ զուգահեռաբար՝ վերածնելով Եկեղեցիները, վերածնելով սոցիալական ծառայությունները և հոգնոր կրթությունը: Մենք գրուցեցինք երկուարեք արդաշահաբած ցանկության մասին՝ սկսել ասպարագարանական երկխոստթյունն, բայց ևս նաև երկխոստթյունը կիսարարացեի և կմուրցեի մեր Եկեղեցիները. և սոցիալական ծառայության կրթության ասպարագում փորձի փոխանակությունը նպաստվուի կյեմի երկուարեք: Խոսեցինք նաև պարզիքակությունների փախանակնան մասին՝ և՛ հոգնորականների. և՛ ուսանողների: Այդ կմուրցեի մեր Եկեղեցիները, և յուրաքանչյուրում կյիննե մարդիկ. ուրիշ բաժանեղակ կյիննե երկու Եկեղեցիների ասպարագարանից: Այսպմտթյան և ծիսասպարագարանի կյանքի մասին»:

## ՕՐ ԵՐԿՐՈՐԴ, 1 ՄԱՐՏԻ

Մարտի 1-ը ուրախության և բներկանի օր է նույն Եկեղեցու և ժողովրդի համար, բայցի. բայց նույն Եկեղեցու Տոնացույցի, Ա. Շերտովն ճգնավորի փոնն է. որը մնձ խանդավառությամբ է գուսլում ոտաց մեջ: Նույն ժողովրդի հետ մեկնել Կրիմի «Արագիոնիան» գրաճարում առևս ողջ հայությունն էր ի մի նկել՝ մասնակցելու մարդությունը Ա. Պապարազին, որ ներկա զբանվեցին երկու Եկեղեցիների «Այրապետ»ները: Ներկա էին կառավարության, թեմական խորհրդի անդամներ, դիվանագիտական այրեր, բոյը Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ, հոգևորա-



Երրայրական ողջակորում «Արագիոնիան» գրաճարում

կանենք. մեծաբիկ ազգայիններ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Հաղորդությունից հետո, անդրադառնալով Նորին Սրբության պաշտոնական այցելությանը, Ն. Ա. Վերսի Երկրորդը հոյս հայրնեց, որ հայ և ուս ժողովուրդների ու Եկեղեցիների միջն դարավոր կապերը վերանորոգվելու. նոր կյանք են առնելու Նո-

րին Սրբության այցելությամբ:

Ուստի Եկեղեցու Հովհաննեսքը Քրիստոսի Ծննդյան 2000-րդ տարեդարձի և Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առթիվ շնորհավորեց հայկական պատվիրակությանը. Հայոց Հայրապետին հանձնեց Հիւսուսի Ս. Ծննդյանը խորհրդանշող սրբապատճեն:



Նվիրմերի փոխանակում Վերափոխման փածարում

Այսուհետև Անրկաններին իր պատգամը հենցու հրավիրվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որի քարոզի հիմնական առանցքն էր «Եղայր սիրէ զեղայր իր»: «Անհավաք Միաձնաւէ Ս. Հջմիածնի ողջույններն ու մաղթանքները փոխանակում Ուղղափառ Եկեղեցուն, ողջ հավատացյալներին՝ ի մասնավորի ասելով.

**«Ձեր Սրբություն, սիրելի եղայր ի Քրիստոս.**

**Մեզ համար հոգիչ և հիշարժած է այս պահը. երբ որպես նորքնդիր Ամենայն Հայոց Կաթողիկոս, համայն Ռուսասփառնի շնորհազարդ Պապիքարքի հետ Կրեմլի Ռուսական նորաշուր գածարում միասնական աղոթք ենք բարձրացնում առ Ասպիսած՝ մեր Եկեղեցիների պայծառության և նրանց Եղբայրական սիրո հարապետության հայցով: Տարապարության ջերմ մժնողորդում վերապրում նմր գարիներ առաջ Զազորսկի Շոգոնոր Ճեմարանում ուսումնառության մեր օրերի բաղցր հուշերը. միարեռում նմր նաև ասրբածամնոր մոալլ ժամանակները. երբ փակ Լին սրբազն այս գաճարի դրները. և նրա լուսն խորանից օրինություն ու պատգամ չէր փոխանցվում հավատացյալ հոգիներին:**

**Փանոր քեզ. Ասրբած. վշրված են այսօր կապանքները, և խնկաբույր այս գաճարի կամարները վերսպին լեցուն են օրիներգությամբ ու աղոթքով. Ամննափրկչին հուսացյալ բազմահազար հավատացյալներով:**

Մենք՝ որպես Հովհաննիկ մի ժողովրդի, որ վերասպել է մեծագույն անարդարությունը և ողբերգությունը 20-րդ դարավագրի, ինչպես և՝ լրասնայակները ասորվածամեր ժամանակների, ինզ խնդրությամբ ենք ողջունում Ռուս Ռուսական Եկեղեցու ու աշխարհական դասերին, որոնց նորոգյալ հավաքով արշակույսում են Մայր Ռուսիայի այսօր ու գայիքը:

«Եղբայր սիր զեղքայր իր՝ խոսքի ճշմարտությամբ համայն հարության հոգնոր կենարոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Հայաստանում, Արցախում և հայոց սիրություն ասքրու մեր ժողովրդի ողջույնն ու սերը, անվերջ մադրամերներն ենք քերել ոտսաց օրինակ հոդ, Ռուսիո բարեպաշտ ու մեծագործ ժողովրդին:»

Միրեկի եղբայրի Քրիստու:

«Հոնձր բազում են, մշակր սակար» Տերունական մրահոգությունն են ապրում այսօր մեր Եկեղեցիները՝ կանգնած ժամանակի երամայականների առջև: Նյութապաշտության մրցավագրում երջանկության, խաղաղության ու անորորդի որոնումների ճանապարհին մեր զավակների հայացքները վերափին շրջվել են դեպի Քրիստոսի Եկեղեցի՝ Ասրծոն հայացքին հանդիպելու անձնակի փափագով, բանզի ազարտությամբ շնորհին արժանացան հաստ լինելու, որ Քրիստոսի սիրո հաղթանակով է Երկիր մոդրակի հարաբը խաղաղությունը, Նրան արդարությամբ է ժողովուրդների հասնաւաշին կեցությունը. Նրա ճշմարտությամբ՝ մարդկային լիարժեք երջանկությունը:»

Լավագեցնությամբ ու վարահությամբ ենք համակված, որ ավանդապահ մեր Եկեղեցիները սերդ համսպրծավիցությամբ, մեկնարկված ջանքերով առավել ևս հաջողելու են Ավելարանի լուսի բարածման իրենց առաքելությունը՝ հանում մեր արեղծարար ու խաղաղանք ժողովուրդների բարորության և ինքնիշխան մեր պետությունների գորացնան: Քրիստոնեական սերն ու եղայրությունը մեր մկրտվել են մեր երկու ժողովուրդների բազմաշարյա պարմության ընդհանուր ավագանում: «Այր ոչ երբէք անկանի» Պողոսյան իիմներգով գորացած՝ հավաքում ենք, որ Անդրեան և Թագենու ու Քարոզուիմնու առաջավների բարողությամբ պիղավորված մեր Եկեղեցիների զավակները երրորդ հազարամյակում ավելիքարանական պարզամների կենսավորմանը կերպելու են հավաքով նորոգյալ և հույսով լուսավառ իրենց կյանքն ու ապագան:

Սրբաբուխ աղոթքով առ Աստված, կրկին անզամ ջերմազին մադրանքներով ողջունում ենք միրեցյալ մեր եղբայրը՝ Ռուսիո շնորհազարդ Պարիհարքին, Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգնոր ոխտապահ բոլոր սպասավորներին և հավաքացյալ հովին՝ հայցելով, որ Տերը՝ ունկնդիր Հայրապետական մեր մադրանքին, երկար բարիբով լնուն կյանք պարզնի Չերտ Սրբությանը՝ ի միմիթարություն բարեպաշտ ուս ժողովրդի: Մեր աղոթքն է նաև, որ անձիր Ռուսասպանի ոչ մի անկյունում այլևս երեք շնորհարիկն ու չաղծելն սրբությունները, և Չերտ Տիրախնամ երկրի բոլոր ճանապարհները առաջնորդեն դեպի Տաճար:

Չերտ Սրբություն.

Ի հիշաբակ մեր երջանիկ հանդիպման, թոյլ գովներ Չեզ նվիրել արծարյա այս պիհը, որպես վկայություն Մեր եղբայրության և հավաքավոր մեր ժողովուրդների անկեղծ սիրո և բարեկամությամ՝ ի Քրիստոս մեկ հավաքով ամուր ու անխորդակ:

«Չնորիք, սէր և խաղաղություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Եղիշի ընդ մնզ և ընդ ամեննեսնանդ, ամէն»:



ԵՐԿՈՒ ՀՈՎՎԱՊԵՏՆԵՐԸ՝  
ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԻՐԵՆԸ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՄՆԵՐՈՎ



ԳՈՐԾԱՐԱՐ ԶՐՈՒՅԱՅ

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՇ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նոյն օրը, երեխյան, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, Պատրիարքարանում փրկեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին Ն.Ս. Վկերսի Պատրիարքը, ուս բարձրաստիճան հոգևորականաց դաշը, Ռուսաստանի Դաշնության նախագահի պաշտոնակարար Վարչիմիր Պուտինը, ՌԴ կառավարության անդամներ, Ռուսաստանում ՌԴ արդակարգ և լիազոր դեսպան Սուրեն Սահակյանը, քոյր Եկեղեցիների ներկայացուցիչներ, թեմական խորհրդի անդամներ:

Ծաշկերույթի ընթացքում փոխանակվեցին բարեւորոյնի խոսքը:

ՌԴ նախագահի պաշտոնակարարն իր ուրախությունը հայդնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու աթոռանիստ այցելելու առիթով: Նա հոյս հայդնեց, որ հայ-ռուսական ավանդական կապերը կնորոշվեն հոգևոր առաջնորդների համագործակցությամբ և կծառայեն երկու ժողովուրդների բարորությանն ու առաջնմասին:

Հայոց Հայրապետն իր խորին շնորհակալությունը հայդնեց ներկաներին՝ ջերմ ընդունելությամբ և ցուցաբերած եղբայրական մեծագոյն փոր համար: Նա հոգեկան մեծ բավականությամբ անդրադառնությամբ առաքելական իր սպասավորությանը հավաքարիմ քոյր Եկեղեցու բարեխնամ հայացքի ներքո ուս ժողովորդի ներկային հոգևոր զարթոնքին, որին ըստ ամենայնի աջակցում է Ռուսաստանի պետությունը:

Վեհափառ Հայրապետը, իր խոսք ուղղելով Ռուսաստանի Դաշնության նախագահի պաշտոնակարար Վարչիմիր Պուտինին, ասաց.

### «Մեծարգո Վաշինգտոն Վաշինգտոնիչ»

Մեր այցի առիթով ի Քրիստոս Մեր սիրեցյալ եղբայր, Նորին Սրբություն Ավեսի Երկրորդի կողմից կազմակերպված սիրո այս ճաշկերությին Ձեզ եեր հանդիպումը առանձնակի ուրախություն է Մեզ համար և խորիդանշական, քանզի մեր նախնիները մշտապես միմյանց եեր կիսել են հանապազօրյա հացը իրենց, նաև՝ ցավերն ու ուրախությունները:

Համոն Մեր Եկեղեցու և մեր ժողովորդի, ինչպես և հայության այն հայրվածմերի, որ, արդարն, նոր Հայրենիք են զգել հյուրներ Ձեր հողում, ողջունում ենք Ձեզ և մաղթում ամենայն հաջողություններ Ձեր դժվարին ու պատասխանավոր առաքելության մեջ: Մեր հանդիպումը ևս մեկ ակնառու վկայություն է մեր Եկեղեցիների ու ժողովուրդների դարավոր անկեղծ սիրո և անանց բարեկամության՝ լիներով արդյունքը նաև մեր պետությունների ջերմ հարաբերության:

Պարմության խաչմերուկներում մեր ժողովուրդները դիմակայել են բազում դժվարություններ՝ ապավինած Աստծուն ու միմյանց, որպես եղբայրներ, որոնց շահերը գրեթե միշտ եղել են ընդհանուր և նոյնական: Միխթարական է Մեզ համար, որ այսօր ևս քաղաքական, վճնպեսական, ընկերային, ինչպես և հոգևոր կյանքի դժվարություններում մեր Եկեղեցիները, ժողովուրդները և պետությունները իրենց փոխհարաբերությունները կառուցում են եղբայրության նոյն այն հիմքերի վրա, որ ամիսաթար են մնացել դարերի փորձություններում:

Մենք հավաքում ենք, որ իրենց հոգևոր ու ակնական դեկալարների իմաստում առաջնորդության շնորհիվ, մեր ժողովուրդները հայրենյաց սրբազան հողում պիտի կերպնեն իրենց բարոր, երջանիկ ու խաղաղ կյանքը:

Մեկ անգամ ևս թիրելով Մեր և Մեր ժողովրդի սերը ի Քրիստոս Մեր նղորը և Զեզ, հայում ենք Բարձրայի հանապազ գորակցությունը համայն ուս ժողովրդին՝ կերպելու բարգավաճ և հզոր իր Հայրենիքը»:

Ճաշկերույթից հետո «Վեհափառ Հայրապետը, հոգևորական և աշխարհական անձնաց ուղևկցությամբ, այցելեց Անհայր գինվորի հուշարձան՝ իր հարգանքի պարքը մարտուցելու Հայրենական մեծ պատերազմում զոհված խորհրդային բանակի գինվորներին, որ ճաղկեսակ զելքելելուց հետո՝ աղոթք վերառաքեց առ Բարձրային Աստված՝ հայցելով Տիրոջից խաղաղություն և հանգստություն նրանց հոգիների համար:

Անհայր գինվորի հուշարձան այցելելուց հետո, «Վեհափառ Հայրապետը հրավիրվեց Մոսկվայի Ս. Ամենատիրկից նորակառույց նկեղեցի, որը իրավես, այսօր



Հայրապետական մատքերք Ս. Ամենատիրկից գաճարում

ուս ժողովրդի հոգևոր վերաբերնությունն է խորհրդանշում: «Եյակերտ այս գաճարը վեր հասնեց ընդամենը 6 դարում, նոյն տեղում՝ մինչև 30-ական թթ. կանգուն նկեղեցու ճիշդ նմանությամբ: Քրիստոսի նկեղեցու բարենորող ու հիմարանչ գեսքի համար հոգևոր Հայրերը զնուություն ու փառք վերառաքեցին առ Աստված՝ աղոթելով, որ Տերը բարեխնամ իր աջը այսուհետ ևս պահի իրենց ժողովուրդների վրա: Ն.Ս. Ակերսի Երկրորդի ուղևկցությամբ Վեհափառ Հայրապետը շրջեց գաճարի սրահներում, ծանրթացավ հոգևոր-մշակութային և պատմական մեծ արժեք ունեցող թանկարժեք ցուցանմուշներին:

\*  
\*   \*

Նոյն օրը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Մոսկվայում հայկական Ս. Խոհեմանան կառուցման համար հարկացված գրաքանակը:

Երեկոյան Վեհափառ Հայրապետն ընդունեց հայ թեմական խորհրդի և հա-

մայնքի անդամներին: Փոքրիկ հյուրասիրության, միքերմիկ ու ջերմ զրոյցի մթնոլորդում փոխանակվեցին բարեղոջունի խոսքեր: Նորին Սրբությունը ծանոթացավ Մոսկվայի հայ համայնքի, ոուսահայոց թեմի ներկա կացությանն ու գործունեությանը, կառուցվելիք Ս. Խաչ Եկեղեցու շինությանը Վերաբերող խնդիրներին: Վերջում Հայոց Հայրապետին իր խորին շնորհակալությունը հայրնեց ներկաներին՝ իրենց Մայր Եկեղեցուն ու հայրենիքին այդքան նվիրված լինելու համար:

## ՕՐ ԵՐՐՈՐԴ, 2 ՄԱՐՏԻ

Մարտի 2-ին, հինգշաբթի օրը, Մոսկվայի հայոց Ս. Հարություն Եկեղեցում սկսվեց առավույյան ժամնրգությունը: Ցնծության մեջ էր ներկա հավաքացյալների հոգ բազմությունը, քանզի այդ օրը Հայ Առաքելական Եկեղեցին նշում էր Ս. Վարդանանց հերոսամարտի հիշաբակի փոնը, որը նաև Վեհափառ Հայրապետի Անվանակոչության բարեղարձն էր:

Կեսօրին Վեհափառ Հայրապետը ժամանեց Եկեղեցի:

Հանդիսավոր թափոր՝ հայոց պատվիրակության անդամները, Ռուսասփանի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրան արքեպոս. Կյուրեղյանը՝ հոգևորականաց դասի հետք, «Հրաշափառ»-ով, զանգերի դողանջներով Նորին Սուրբ Օծությանն առաջնորդոց դեպի Ս. Հարություն առաջնորդանիստ Եկեղեցի:

Փոքրիկ արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը, իր պատգամը ուղղելով հայորդիներին և նշելով, որ կարծես նախախնամության կամքով այս այցը զուգաղիք Վարդանանց փոնին, ասաց.

«Միրելի Սրբազն, սիրելի բարեպաշտ հայորդիք.

Մեզ համար հոգեկան մեծ բավականություն, ուրախություն է գրնվել այս սրբազն կամարների ներք, ուր բարիներ առաջ ծառայել ենք և Մեր աղոթքն ենք այս Սուրբ Սեղանից առ Աստված բարձրացրել որպես սարկավագ, որպես Զագորսկի Շոգևոր Ակադեմիայի ուսանող: Այսօր մուտք ենք գործում այս Եկեղեցուց ներս որպես Հայրապետ Ամենայն Հայոց և բերում ենք ձեզ օրինություններ Մայր Աթոռ Սուրբ Հջմիածնից, քերում ենք ձեզ մեր հայրենաբնակ ժողովրդի սերք և ողջույնները: Կաթողիկոսական ընդունությունից հետո, ինչպես մեր հին Եկեղեցիների ավանդույթն է, Շովկապետը եղայրական այց է կարարում՝ հարգանք մաքուցելու քույր Եկեղեցիների հոգևոր պետքերին: Մեր առաջին նման այցելությունը Մենք կապրանցինք Ռուս Եկեղեցու հոգևոր պետ Ակերսի Երկրորդին՝ Համայն Ռուսիո և Մոսկվայի Պատրիարքին: Օդանավակայանից սկսայ մեր նկատմամբ դիսանք ջերմ վերաբերմունքի դրսերում, որը, վարահարար, Ռուսասփանում, ի մասնավորի՝ Մոսկվայում ապրող հայության նկարմամբ գնահատանքի արդահայպությունն էր: Այդ ջերմ, ուշադիր, հարգալից, եղայրական վերաբերմունքը բխում էր նաև մեր երկու ժողովուրդների և մեր երկու Եկեղեցների դարավոր բարեկամական հարաբերություններից:

Նորին Սրբություն Ակնքսի Երկրորդի հրավերքով Մենք ներկա գրնվեցինք Կրեմլի Եկեղեցու մեջ՝ Ռուսական կամարում մաքուցվող արարողությանը, որից հետո Նորին Սրբության հրավերքով Եկեղեցի և Եկեղեցուն կից ընդունելության դաիլիճ այցելեց Ռուսասփանի կառավարության դեկանակար և նախագահի պաշտոնակարար Վլա-

դիմիք Պատիկներ, որի հետ մենք զբայց ունեցանք մեր երկրին հուզող խնդիրների, մեր երկրի ներկա կացության, մեր երկու ժողովուրժների փոխադարձ հարաբերությունների մասին։ Նախազամի պաշտոնակարգարք վարահեցրեց, որ շարտեակիլիու ևն եղարարական ջերմ հարաբերությունները փոխահավաք գործակցության մակարդակի վրա, որ իրենք մշտական գորակից են լինեն մեր ժողովրդի զավակաց, իրենք ընկազմ են այն դժվարությունները, որ այսօր դիմագրավում է մեր հայրենիքը և մեր ժողովուրդը ինչպես Հայաստանու, այսպես է Ռուսաստանի ասհմաններից ներ։ Մեզ համար միմիաբական էր նախազամի պաշտոնակարգարի մասնավոր ուժադրությունը և իր գորակցությունը, եսա իր խոսքի մեջ դրսերիող հարգանքը և սեր մեր ժողովրդի զավակաց նկարմանը։ Ձերմ կին երս նորահայրությունները և նախանձախնդրության ոգի դրսերող՝ հանդեսաց մեր երկիրը և մեր ժողովուրդը։ Մեր այս ճանապարհորդության ընթացքում, բնականարար, Մեր քայլերը պիտի սատագնորդին Մեզ դեպի այս նկեղեցին, որ մեր ժողովրդի զավակունք ամեն օր իրենց աղոթքն են առ Վարչական բարձրացնում և արդքի այս սուրբ լրամ միջոցով իրենց կապը, հաղորդակցությունը, հարաբերությունը հասարաւում մեր պարմության, մեր հայրենի սրբազն ժառանգության ու պահպատճեանց հետ՝ պահապանելով իրենց ազգային դիմագիծը, ազգային ոգին, շարտեակելով պահպանելով մեր լեզուն, պահպանել եսա այն ամենը, որ ընտրության է մեզ որպես ազգ, որպես հայ ազգ։

Այսօր, նախախնամության կամրջ կարծևն, Մեր այցը զուգադիպում է Հայ Եկեղեցու կարևորագոյն մի վոնի։ Դա Վարդանանց դրոն է, որ մեր Եկեղեցին նշում է այսօր։ Վարդանանք, ինչպես զիվեր, այն հայ քաջորդի կին, ովքեր 451 թ. կանգնեցին պարսից դևան՝ պաշտպանելու հայրենին և հավաքրը։ Նրանք նախադակվեցին, երանց արյամբ ու հավաքով նվիրագրութեան մեր Եկեղեցին և մեր Հայրենիքը։ Վարդանանք դարձան ոգին հայության, խորհուրդը մեր պարմության, մեր լինելության։ Ցուրաքանչյուր հայ Վարդանանց խոսքով ընդունում է իր հավաքրը որպես իր Էռթյան անքակի մասը, ինչպես Վարդանը պիտի ասեր՝ որպես իր մաշկի, իր մորթի գույնն է ընկազմական քիչ դրակոննեական հավաքրը։ Ասցինք նախախնամության կամքի դրսնորուսն ենք դրսենում այսօվա այցի և այս վրոնի զուգադիպման մեջ, որովհետք Հայրապետի համար ինչն ավելի նվիրական պարզամ կարող է լինել՝ ուղղենու իր ժողովրդի զավակաց, հավաքավոր հայորդիներին, քան հավաքարմությունը հայրենյաց ժառանգությանը, մեր հայրենի սրբազն հավաքրին, քան շարտեակել վառ պահեն, հավաքարմություն դրսենորել քիչ դրակոննեական մեր հոգենոր արմեների ներկարանը՝ քիչ դրակոննեական դրսենորել որպես ձեր մաշկի գույնը, ձեր Էռթյունը, հայկականության և հայի բնորոշման ամբողջականությունը։ Մեր մաղթանքն է, որ փարված մնար, որբան է համանպ, այս նկեղեցուն, այս նկեղեցու միջոցով ձեզ փոխանցվող մեր 1700-ամյա քիչ դրակոննեական պարմությանը։ Արդեն իսկ երկու օր առաջ բնասանք, որ նոր նկեղեցու հիմքերն են դրվում։

Թող լնի դատնան ձեր հոգուց դեպի երկինք բարձրացող աղաքանքն ու պատարանքը մեր Երկնավոր Հոր Կողմից, և Ասպրակ փոխադարձի ձեր հայցին և ձեր խնդրանքին՝ պարզեցելով ձեզ երջանիկ ու բարոր, խաղաղ և արգասարներ կյանք Մովկայում և Ռուսաստանի հյուրընկայ հողում։ Թող Ասպրո սեր գարածյալ լինի ձեզ վրա, ուղեկից լինի ձեզ ձեր կյանքի ողջ ընթացքում։

Մեր Տիրոց՝ Շատու Քրիստոսի շնորհը, սեր և խաղաղությունը թող լինեն ձեզ հետ, բոլորիս հետ այժմ և հավիրյան հավիրենից, ամեն։

Նավարի պարզամի, Ռուսասփանի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրան արքեպոս, Կյուրեղյանի ողջունի և բարեմաղթանաց խոսքի, Վեհափառ Հայրապետը թափորի առաջնորդությամբ դուրս եկալ եկեղեցոց՝ իր օրինությունն ու Քրիստոսի խաղաղությունը բաշխելով հայորդիներին:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՇԿԵՐՈՒՅԹ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՍՊԱՆԱՏԱՆԼ

Նույն օրը, երեկոյան, Ռուսասփանի Դաշնությունում հայկական դեսպանագրունը պաշտոնական ճաշկերույթ կազմակերպեց ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, որին ներկա էին Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք Ալեքսի Երկրորդը, քոյլ Եկեղեցիների բարձրասփիճան հոգևորականներ, Գլուխական իշխանությունների ներկայացնություններ, Մոսկվայում հավաքարմագրված դիվանագերներ, համայնքային խորերի անդամներ, Մոսկվայի հայկական համայնքի մշակույթի, արվեստի նշանավոր գործիչներ:



Համապետական աղոթքի պահին

Զերմ մթնոլորդություն կրկին անգամ երկու քոյլ Եկեղեցիների պետքերը կարևորեցին դարեր շարունակվող բարեկամական հարաբերությունների համար գերմագման ու ամրապնդման անհրաժեշտությունը, որն իր հերթին կսրանի երկու եղբայրական ժողովուրդների հարաբերությունների սերպացմանը:

Զերմ որ Ս. Վարդանանց տոնը Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչութան բարեդարձն է նաև, ապա այդ առիթով և շնորհավորանքի ու բարեմաղթանաց խոսքեր ասվեցին՝ ուղղված Վեհափառ Հորը:

Ուրախություն հայրենին գերմ ընդունելության համար՝ Նորին Սրբությունը նշեց, որ իր անձի նկարմամբ ցուցաբերված հարգանքն ինքը նկատում է որպես

սեփական ժողովրդի հանդիպ դրսնորդած հարգալից վերաբերմունք ու պարիվ:

Վեհափառ Հայրապետը, իր խոսքն ուղղելով Ն.Ս. Ալեքսի Պատրիարքին և ներկաներին, ասաց.

«Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.

Մնար թարգմանիք կարիքը չտնեցած Զերդ Արքության խոսքերը հասկանալու համար, սակայն դժվարանում ենք շարունակել խոսել, մորեքն արդահայրելու ուստիքն, և, ներողություն ինսպիրելով Մեր հայրենակիցներից, ովքեր, անկանած, հիանալի կերպով խոսում են ուստիքն, և Զերդ Արքությունից, Մներ կամնեում ենք արդահայրելու հայերներ լեզվով և Զերդ թույլպիտյամբ Զեզ հետ հաղորդակցվել թարգմանիք միջոցով:

Զերդ Արքություն.

Եցանեկամբ Մեր ամենաօքերմ զգացումները փոխանցել Զեզ այս երկու օրերի երկիխոսությունների ընթացքում. Զերդ բարի, ազինիվ, ջերմ խոսքերի համար՝ ուղղված ինչպես Մեր այնպես էլ մեր Եկեղեցուն և մեր ժողովրդին: Մեզ համար անկեղծ ուրախություն է գրինելի Մովսեսայում, լինել Զերդ հյուրը և, որպես եռորնդիր կարողիկոս, փոխանցել Մեր եղբայրական սերը և հարգանքը Զեր անձին, Զեր անձի միջոցով՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցուն և ռուս հայաբարձոր ժողովրդին ու նաև պետքարար: Մներ ուրախությամբ հերկւում ենք Ռուս Եկեղեցու օրավոր գորացող հեղինակությամբ և ծառայությամբ, որ նա իրավանացնում է հանրության, ժողովրդի կյանքում, որի արդյունքում էլ ճնոր է բերում հեղինակություն ժողովրդի մոտ, և հեղինակություն, որ իր ծառայության և աշխարհանքի շնորհիվ ճնոր է բերում նաև Ռուս Եկեղեցին և Զերդ Արքությունը: Զեր աշխարհանքի արդյունքի և ծաղկող Ռուս Եկեղեցուն մասին են վկայում այն բվերը, որ ներկայացրեցիր բիշ առաջ այսրեզ: Մներ, անշուշդ, նման բազավորիչ թվեր չենք կարող ներկայացնել, սակայն մներ նույնական փորձում ենք մեր ժողովրդին վերապարձնել դեսպի իր հավաքրի ճշմարիդ ակունքները, որից, ինչպես ռուս հավաքավոր ժողովուրդը, անցնող անասրագության բարիներին հեռացել էր հարկադրաբար: Նորանկախոսության պայմաններում վերազարթոնք է ապրում նաև Շայ Եկեղեցին: Գրեթե այն բոլոր որորներում, որ իշխափակեց Զերդ Արքությունը, աշխարհանք է իրավանացնում, հոգևոր ծառայություն է կարարում նաև Շայ Առաքելական Եկեղեցին իր հոգևոր սպասավորների միջոցով: Գլխավոր աշխարհանքը, բնականաբար, մնաց համար հոգևոր կրթությունն ու դաստիարակությունն է, Քրիստոնի Ավելարանի պարզամերն ու պատվիրանները ջամբելն է մեր ժողովրդին, Եկեղեցու կերպումը յուրաքանչյուր հավաքացյալի հոգուց ներս: Այդ իմաստով անհրաժեշտ էր, որ մներ նույնական կարողանալինք համապեր պակասը մնը հոգևոր շարքերում, որի համար հիմնվեցին երկու հոգևոր կրթական հասկարություններ Անանում և Գյումրիում: Աշխարհանք է կարարվում նաև, որպեսզի նորոգվեն իին Եկեղեցիները, որոնք խոնարիված էին երկար դասմանակների անասրագության այդ շրջանում, և նաև կառուցվն նորերը:

Շայ Եկեղեցին իիմնական աշխարհանք է իրականացնում երիխասարդության կրթության ու դաստիարակության ասսպարեզում: Եկեղեցին իր հոգանակության բակ է վերցրել նախկին մանկապատճեններն սպեղծագործական կենցրուններից (այլոներ-պալապաներից) մի բանիսը, որդեմ նրանց, հիմնական ուսումնական աշխարհանքների անասրագության այդ շրջանում, և նաև կառուցվն նորերը:

**կություն:** Աշխարհանքներ են իրականացվում նաև հիվանդանոցներում, որ բացել ենք հագուկ մարդուներ: Ունենք հոգևոր սպասավորներ, որոնք իրականացնում են հոգնոր ծառայություն բանտերում, ազարազրկման վայրերում, ինչպես նաև բանակում, և ուրախությամբ հայդնում ենք, որ այդ հասպարությանց ղեկավարության նախաձեռնությամբ կառուցվում են առանձին մարդուներ: Մենք զիրակցում ենք, որ մեր ծառայությունը առավել արդյունավեր, արգասարեր կարող է լինել, եթե մենք մեր ուժեղը մեկնենք ենք, համապետենք, միացնենք մեր քոյլ Եկեղեցիների հետ, մասնավորապես այս գրածաջրանում առկա քոյլ Եկեղեցիների, ի մասնավորի՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու հետ: Այս կապակցությամբ կուգենք Մեր շնորհակալությունը հայրներ Նորին Սրբությամբ՝ իր օրենության համար, որով վերականգնվում է ուսանողների փոխանակության գեղեցիկ ավանդությունը: Մենք հավաքում ենք և վճռականորեն ենք դրամադրված, որպես նորոգվեն և վերականգնվեն բոլոր հնարավոր կապերը, որոնք պիտի սկրիպտնեն, զորացնեն մեր Եկեղեցիները: Տակալին այսդեռ ճանապարհելիս Մենք ինքներս մրածում էինք մեր երկու Եկեղեցիների միջև երկխոսության սկզբնավորման նման մի առաջարկ բերել: Ուրախ ենք, որ մեր մրածումները և զցացումները համընկնում են: Մեր խորին համոզումն է, որ նոր դարաշրջանում, նոր հազարամյակում, երբ մարդկությունը կանգնած է նոր հրամայականների, նոր մրանոցությունների առջև, անհրաժեշտ է, որ մենք, որպես Եկեղեցիներ, մեր ծառայությունը լիարժեքորեն և ամբողջականորեն իրականացնենք մեր հավաքավոր ժողովուրդների կյանքում զիրակցումով, որ եթե կյանքը իւրախված ցիինք Քրիստոսի Ավելարանի լույս սկզբունքների վրա, բարձր բարոյականի վրա, 20-րդ դարի բոլոր ծեռքբերումները՝ զիրական, մշակութային բոլոր ոլորդմերում, կարող են վերսկին չարիքի վերածվել ազգերի և պատրությունների կյանքում: Այս իմաստով Մենք Մեր ծեռքը երկարում ենք մեր քոյլ Եկեղեցիներին, ի մասնավորի՝ Ռուս Եկեղեցուն, համագործակցության համար, որ բխում է մեր դարավոր պատմության ոգուց և թելադրանքից: Մենք այս հանդիսավոր պահին մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված, որպեսզի Տերը զորացնի Մեր Եկեղեցիները, նրանց սպասավորներին, եղբայրաբար, ծեռք-ծեռքի դպած իրենց ծառայությունը բերի մեր հավաքավոր ժողովուրդին՝ ի զորացում մեր պետությունների և ի հասպարումն այն ցերմ եղբայրական հարաբերությունների, որոնք ծեսավորվել են մեր ժողովուրդների կյանքում անցած հարյուրամյակներում: Մենք վսփահ ենք, որ առաջիկա գարին, երբ մենք պիտի գոնախմբենք մեր քրիստոնեությունը պետքական կրոն հոչական 1700-ամյակը, այն պիտի մեր քրիստոնեական համնդրայրության զորացման, ամրապնդման նոր առիթ լինի, որի ծիրից ներս պիտի օգպվենք նաև Զեր առաջարկից՝ իրականացնելու մեր Եկեղեցիների միջև երկխոսությունը:

Թողություն ասարվածային Սուրբ Հոգին առաջնորդի մեջ և մեր ընթացքը դեպի սեր, եղբայրություն և համագործակցություն. ամենն:

Այսուհետև Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը իր խոսքն ուղղելով ՌԴ-ու Ռայականի հանրապետության արքակարգ և լիազոր դեսպան տիար Սուրեն Սահակյանին և բոլոր ներկաներին՝ ի մասնավորի նշեց, որ առաջին պաշտոնական այցը թելադրված էր մեր երկու ժողովուրդների պատմությամբ և մեր Եկեղեցիների միջև պիտու դարավոր բարեկամական հարաբերություններով:

«Ինձ համար մեծագույն որախոտքան և բերկանքի առիթ է այսօր գրենվել այս օջախում, Մեր սիրեցյա եղրոր ինք: Մենք, բար իին ու բարի ավանդութիւն, կարս բեցինք Մեր ասացին այցը մեր բոյր Եկեղեցու հոգնոր պնդին, Մեր սիրեցյա եղրորը՝ Համայն Ռուսիոն և Մոսկվայի Պատրիարք Ալեքսի Երկրորդին: Մեր ասացին այցը թերադրված էր մեր ժողովրդի պարտմությամբ և մեր երկու Եկեղեցիների միջև փրկող դարավոր բարեկամական հարաբերություններով: Դորս զարտվ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, Մեր քայլերն ուղղեկով դնափ Ռուսաց երկիր, ողջ ճանապարհի ընթացքում և այսին Մեր հոգում հնչում էր մեր մեծ գրողի խոսքը. «Օրինյալ լինի այն պահի, եթի ռուսի ուրբ միավ հայոց հողը»: Այդ մոնուրը դարերի ընթացքում վերածվեց ամոր ու հասրապոն բարեկամության մեր ժողովուրդիների և մեր Եկեղեցիների միջև: Մենք ստացին հայրապետական Մեր այցով եկաեք հասրաբերություն առավել ևս նպաստեն այդ եղրայրությունն, ջերմ հարաբերությունների ամրացմանը, սրբացնանք՝ հավաքրով, որ երկու Եկեղեցիների ջերմ եղրայրական փոխհարաբերություններն անպայմանորեն իրենց անդրադարձ սիլիդի ունենան ինչպիս մեր ժողովուրդիների բարեկամության, այնպին էլ մեր երկու պետքությունների փոխադարձ եղրայրական հարաբերությունների վրա: Անցեն այս երկու օրերի ընթացքում այն վերաբերմունքը, որ մենք ասկեցինք Մեր սիրեցյա եղրոր կողքին, Մեր սիրեցյա եղրորից ու նաև իրեն շրջապատող հոգնոր դասից և հավաքացյալներից, դեսի Մեզ եկող ջերմ, անկենդ, եղրայրական հարաբերությունների ճշմարիդ վկայությունն էին: Մեր սիրեցյա եղրոր՝ Նորին Մրության հենք Մենք աղոթքի կանգնեցինք Ռուսական կենսին կանոնական կարածիք գրադրություն: Մեր սիրեցյա եղրոր կողմից Մեզ մեծագույն պարիվը շնորհվեց, եթի հրավիրվեց հանրապետության նախագահի պաշտոնական պարագաները, կառավարության դեկանի Վայումիք Պուտինը՝ մասնակցելու ճաշին և մեզ հենք միասին այդ սիրու սեղանի շորջ գրենվելու, այսուհետև նաև առանձնազրույց ունենալու: Մեզ համար, որպես Հայոց Հայրապետ, մեծագույն միմիթարություն էր լսել Ռուսիոն նախագահի պաշտոնակարարի նախանձախնդիր արդահայրությունները վերաբերմունքը հանդեպ հայոց պետությունը, հայ ժողովուրդը, նրա ներկան և նրան հոգու հարցերն ու խնդիրները:

Այսօր Մենք այցելեցինք Մոսկվայի նորակառույց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի, սրբածությունվ մուտք գործեցինք նորակառույց այդ տաճար, որը ուսւ ժողովրդի հավաքրի կենդանի վկայությունը, իրենքն մարմնացումն է: Այդ հիմարանց եկեղեցու կամարների ներք Մեր հոգու մնջ բարձրացավ խորհուրդն այն գոնի, որ այսօր գոնախմբում է Հայոց Եկեղեցին՝ Արքոց Վարդանանց խորհուրդը: Գիտեք, որ շուրջ 1500 տարի առաջ, 451 թ., Վարդանանք դուրս եկան պարսից դեմ՝ իրենց կյանքով պաշտպանելու հարց բրիսութնական հավաքրը: Այսօր թեպես աներաժշգությունը ձևս արյուն հեղեկու, սակայն Վարդանանց հոգևոր պատերազմը մենք՝ թե ուսւ ազգը, և թե՛ հայ ազգը, շարունակում ենք մեր կյանքի բոլոր ասպարեզներում, առավելաբար հոգևոր ասպարեզում: Մենք գիևսանք այդ նոր խորհրդի համահունչ դրսնորումը Ամենափրկիչ եկեղեցու այդ կառույցի մեջ, որը «Մահ իմացնալ անմահութիւն է» արդահայրության փոխարեն հեցում է «Կենանք իմացնալ անմահութիւն է»: Ուրեմն, այս խորհրդով ամենուր ապրենք և կերպենք մեր անմահությունը՝ մեր նպաստը բերենու մեր ժողովորդների բարձրամասության նվիրական առուր գործիք:

Այս ուրախ, հանդիսակոր պահին ևս ուզում եմ նաև իմ շնորհակալության խոսքն ուղղել մեր հարգարժան դեսպանին, որն այս գեղեցիկ հանդիպումը, երեկոն

պարզեց մեզ, և ի նշան մեր շնորհակալական զգացումների, կուզեմ փոխանցել մեր պարզածան դեսպանին մի փոքրիկ եհշարքակ՝ բրիգառնեական խաչ, որին ապավինած՝ դարեր շարունակ ապրել ենք: Փառք և գնություն մատուցելով առ Աստված՝ կրկին անգամ իմ խորին եղայրական երաշխագիգությունն եմ հայրնում Մեր սիրելի եղորդ՝ Նորին Սրբություն Ալեքսի Երկրորդ Պատրիարքին, նաև մեր գուն, մեր օջախ՝ հայոց պետության դեսպանագործն իր այս այցի համար, հավաքով, որ եղայրական զգացումներով մնար պիտի աշխաղենք ի փառ մեր ժողովորդների, ի պայծառություն մեր երկու Եկեղեցիների և մեր հավաքավոր զավակների:

Մենք, որ այսօր ներկայանում ենք Նորին Սրբությանը մեր Եկեղեցու ամբողջականության մեջ՝ հոգուր և աշխարհիկ դաս, հավագայացածներ, բոլորս մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված՝ հայցելով Նորին Սրբությանը երկար, առողջ կյանք և բեղուն գործունեություն:

Վերջում Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ Հայրապետը ներկա հայորդիներին պարզամեց հավաքարիմ մնալ նախնյաց հավագրին ու, հարազար Եկեղեցու ավանդություններին, մշտական պահել Մայր Վթոռ Ս. Էջմիածնի լույսը հոգիներում, սերն ու նվիրումը Մայր Հայաստանի հանդեպ և անդարբեր զինել հայոց համայնքում ծավալվող աշխաղանքների նկարմամբ:

## ՎԵՐԱՌԱՐՉ ՏԱՅՐԵՆԻՔ, ՄԱՅՐ ԱԹ-ՈՌ Ս. ԷԶՍԻԱԾԻՆ

Ավարտելով իր անդրանիկ պաշտոնական այցը Ռուսաստան՝ մարդի 3-ին, ուրբաթ օրը, Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Հայրենիք՝ իր հետ բերելով երկու ժողովուրդների նորոգված բարեկամությունից բխող ջերմագին սերը:

Նորին Սրբությանը «Զվարքնոց» օրանավակայանում դիմավորեցին Մայր Վթոռ Ս. Էջմիածնի միաբանները, կառավարության անդամներ, պաշտոնագործ այլ անձինք:

## ԳՈՐԾԱԲԱԿԱՆ ԱՂՋԱՋ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ

Մայր Տաճարում, Էջման Ս. Սեղանի առջև, Ամենայն Հայոց Հայրապետն իր գոհաբանական աղոթքը վերառաքեց առ Բարձրյալն Աստված, ապա ներկաներին հակիրճ բեղեկություն տվեց կապարված այցելության մասին՝ ներկայացներով իր հանդիպումները Ռուսաց Պատրիարքի, ՌԴ նախագահի պաշտոնակարգար Վլադիմիր Պուտինի, դեկապար անձանց, հայ համայնքի ներկայացուցիչների, հավագայացայ ժողովրդի հետք:

Անհավատ Հայրապետը կարևորեց պաշտոնական այս այցելությունը՝ նշելով, որ այն էապես նպաստելու է երկու քոյլ Եկեղեցիների, եղայրական ժողովուրդների, հետքեաբար նաև երկու պետությունների բարեկամական հարաբերությունների սերպացմանն ու ամրապնդմանը:

ՄՈՒՇԵՂ ՄՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

